Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 30-ի N 452 - Ն որոշման

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) ներքին կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջան նշանակելու, պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման, իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման կարգի և պայմանների ամբողջությունն է:

2. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Պրոբացիայի ծառայությունը՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածներով նախատեսված՝ տնային կալանք և վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 2-5-րդ և 7-րդ կետերով նախատեսված պատիժների կատարումը.

4) տրամադրում է պրոբացիայի շահառուին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցներ.

5) իրականացնում է վերահսկողություն պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.

6) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է հաշտարարություն.

7) իրականացնում է վերասոցիալականացման և վերականգնողական միջոցառումներ.

8) ապահովում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցների կատարումը.

9) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ՉԿԱՊՎԱԾ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

3. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումն ապահովում է Պրոբացիայի ծառայության՝ պրոբացիայի շահառուի հաշվառման, մշտական բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի կամ համապատասխան բժշկական հաստատության գտնվելու վայրի կամ բնակության վայրին առավել մոտ գտնվող համապատասխան ստորաբաժանումը, իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրանց փաստացի բնակության վայրի հասցեն սպասարկող ստորաբաժանումը (այսուհետ՝ ստորաբաժանում):

4. Օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը (այսուհետ նաև՝ դատական ակտ) ստանալուց հետո Պրոբացիայի ծառայության ղեկավարն անհապաղ դատական ակտի կատարումը գործող գործավարության կարգի համաձայն մակագրում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարին (այսուհետ նաև՝ ստորաբաժանման ղեկավար): Ստորաբաժանման ղեկավարը դատական ակտը ստանալուց հետո անհապաղ դատական ակտի կատարումը մակագրում է իր

անմիջական ենթակայության տակ գտնվող պրոբացիայի ծառայողին (այսուհետ նաև՝ պրոբացիայի ծառայող):

5. Դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան Պրոբացիայի ծառայության ղեկավարի կողմից ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում և հրավիրում Պրոբացիայի ծառայություն՝ հստակ նշելով ներկայանալու օրը և պատշաճ ծանուցում նշանակված պատժատեսակի, դրա ժամկետների կամ չափի և կատարման կարգի մասին, ինչի վերաբերյալ կազմում է համապատասխան արձանագրություն: Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողը, «Պրոբացիայի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, նրան պատշաճ կերպով ծանուցում է պատժի և ժամկետների մասին, իսկ տուգանքի դեպքում՝ դրա չափի և վճարման ժամկետների մասին և ծանուցումը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝ ստորաբաժանում ներկայանալու վերաբերյալ (Ձև N 1): Պրոբացիայի ծառայողը կազմում է պրոբացիայի շահառուի անձնական գործ: Անձնական գործը կազմվում է էլեկտրոնային եղանակով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով (Ձև N 2): Անհնարինության պատճառները վերանալուց հետո անձնական գործը մուտքագրվում է էլեկտրոնային ծրագիր և վարվում է էլեկտրոնային եղանակով:

6. Պրոբացիայի շահառուի՝ ստորաբաժանում ներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը նրան վերցնում է հաշվառման, անհապաղ պրոբացիայի շահառուի ստորագրությամբ պարզաբանում է նշանակված պատիժը կրելու կարգն ու պայմանները, պրոբացիայի շահառուի իրավունքները և պարտականությունները, դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը (Ձև N 3), ինչպես նաև լրացնում է հաշվառման քարտ (Ձև N 4):

7. Եթե առկա են հավաստի տվյալներ, որ պրոբացիայի շահառուն ֆիզիկապես անկարող է կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկայանալ ստորաբաժանում, ապա պրոբացիայի ծառայողն անձամբ այցելում է պրոբացիայի շահառուին կամ ապահովում է նրա՝ ստորաբաժանում ներկայանալը:

8. Պրոբացիայի շահառուի՝ ծանուցմամբ նշված օրը ստորաբաժանում չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը 3 աշխատանքային օրվա ընթացքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն, իսկ պրոբացիայի շահառուին նրա բնակության կամ աշխատանքի վայրում չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, որն իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու ուղղությամբ՝ հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

9. Եթե հնարավոր չէ կապ հաստատել պրոբացիայի շահառուի հետ, կամ նրա գտնվելու վայրը չի բացահայտվում ծանուցումն ուղարկելուց հետո 15 օրվա ընթացքում, ապա ստորաբաժանման ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում դատարան է ներկայացնում միջնորդություն՝ պրոբացիայի շահառուի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ:

10. Պրոբացիայի շահառուի կողմից պատժի կատարումից խուսափելու դեպքում Պրոբացիայի ծառայությունն այդ մասին անհապաղ կազմում է արձանագրություն և 2 աշխատանքային օրվա ընթացքում միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ, իսկ տուգանք պատժատեսակի դեպքում՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու կամ տուգանքը ազատազրմամբ փոխարինելու վերաբերյալ:

11. Պրոբացիայի ծառայողը դատապարտյալին հաշվառման վերցնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու, պատժի կատարման և կատարող մարմնի մասին տեղեկացնում է դատական ակտը կայացրած դատարանին և հաղորդում է ուղարկում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը (Ձև N 5):

12. Օրենքով սահմանված կարգով դատական ակտը փոփոխվելու դեպքում պրոբացիայի շահառուի անձնական գործին կցվում են նաև համապատասխան փոփոխություններ նախատեսող դատական ակտերը:

13. Պատժի կատարումից հետո ստորաբաժանումը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք պատիժը կրած լինելու մասին (Ձև N 6) ու դրա մասին հայտնում է դատական ակտը կայացրած դատարանին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացնում է:

4. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՏՈՒԳԱՆՔԻ ՁԵՎՈՎ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ

14. Տուգանքի կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

15. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի՝ ստորաբաժանում ներկայանալու դեպքում նրան վերցնում է հաշվառման, անհապաղ ստորագրությամբ պարզաբանում է պրոբացիայի շահառուի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում՝ օրենքով սահմանված պատասխանատվությունը, տուգանքի վճարումը տարաժամկետված կամ հետաձգված լինելու դեպքում կազմում է վերահսկողության պլան (Ձև N 7), որում ներառում է տուգանքի վճարման ժամանակացույցը և պրոբացիայի ծառայողի գործողությունները՝ ժամանակացույցը խախտելու դեպքում, լրացվում է հաշվառման քարտ:

16. Պրոբացիայի շահառուի կողմից տուգանքի վճարման անդորրագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքում ստորաբաժանման ղեկավարը 2 աշխատանքային օրվա ընթացքում դատարան է ներկայացնում միջնորդություն պրոբացիայի շահառուի նկատմամբ դատական ակտով նշանակված տուգանքը կամ դրա չվճարված մասը բռնագանձելու վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքի, երբ պրոբացիայի շահառուն մինչ այդ դիմել է դատարան՝ տուգանքը տարաժամակետելու կամ հետաձգելու կամ տուգանքը

հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ և դիմումի մուտքագրված պատճենը ներկայացրել է Պրոբացիայի ծառայություն:

17. Դատարանի՝ բռնագանձման վերաբերյալ դատական ակտը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորաբաժանման ղեկավարի կողմից տուգանքի գանձման վարույթը կասեցվում է:

18. Եթե Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը գույք չի հայտնաբերել, կամ հայտնաբերված գույքը բավարար չէ տուգանքը վճարելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ տուգանքը վճարելու համար անհրաժեշտ է գույքի բաժանման կամ բաժնեմաս անջատելու պահանջով հայց ներկայացնել, ապա կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողի որոշումը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն:

19. Սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված արձանագրությունը ստանալուց հետո ստորաբաժանման ղեկավարը վարույթի կասեցումը վերացնում է և միջնորդություն ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքը կամ դրա չվճարած մասն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ:

20. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը տուգանքի գումարը բռնագանձելու վերաբերյալ 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությանը, ինչի հիման վրա Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի շահառուի անձնական գործն արխիվացնում է:

21. Այն դեպքում, երբ տուգանքը նշանակվել է որպես լրացուցիչ պատիժ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների հետ, կամ որպես պատիժ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրող անձի նկատմամբ, կամ այն անձի նկատմամբ, որի վերաբերյալ կիրառվել է ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցը, ապա պրոբացիայի ծառայողն այցելում է հիմնական կամ սկզբնական պատիժ կատարող հիմնարկ՝ նրան հաշվառման վերցնելու նպատակով:

22. Եթե պրոբացիայի շահառուն ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրելու ընթացքում ի վիճակի չէ վճարելու տուգանքը, ապա պրոբացիայի

ծառայողն այդ մասին անհապաղ կազմում է արձանագրություն և տեղեկացնում պրոբացիայի շահառուին՝ դատարան համապատասխան միջնորդություն ներկայացնելու հնարավորության մասին:

23. Պատժի չկրած մասը տուգանքով փոխարինելու դեպքում և այն դեպքում, երբ տուգանքը նշանակվել է որպես լրացուցիչ պատիժ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների հետ, կամ որպես ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրող անձի նկատմամբ, ապա սկզբնական պատիժ կատարող հիմնարկի կողմից օրենքով սահմանված կարգով ծանուցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տուգանքի կատարումն ապահովվում է օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

24. Տուգանքը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու դեպքում, յուրաքանչյուր անգամ դատարանի կողմից սահմանված ժամկետում կամ չափով այն չվճարվելու դեպքում իրականացվում են սույն կանոնակարգի 16-րդ կետով սահմանված գործողությունները:

5. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ

25. Հանրային աշխատանքների կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

26. Հանրային աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը հաշվարկվում է պրոբացիայի շահառուի՝ հանրային աշխատանքների փաստացի ներգրավվելու պահից:

27. Պրոբացիայի ծառայության դիմումի հիման վրա կազմակերպությունները 10 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում են հանրային աշխատանքների կատարման վայրեր:

28. Կազմակերպությունների կողմից առաջարկված հանրային աշխատանքների կատարման վայրերի հայտի հիման վրա Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո 5 աշխատանքային օրվա

ընթացքում պրոբացիայի շահառուին ուղեգրում է հանրային աշխատանքների կատարման համապատասխան վայր (Ձև N 8):

29. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի առաջին աշխատանքային օրն այցելում է հանրային աշխատանքների կատարման վայր, պրոբացիայի շահառուին և համապատասխան կազմակերպության ղեկավարին ստորագրությամբ հանձնում է համապատասխան կազմակերպության հետ համաձայնեցված ժամանակացույց (Ձև N 9), որը պարտադիր է պրոբացիայի շահառուի համար:

30. Պրոբացիայի շահառուն և հանրային աշխատանքների կատարման վայրի աշխատակազմը յուրաքանչյուր օր ժամանակացույցում նշում են կատարում կատարված աշխատանքների ժամաքանակի մասին, որը հավաստվում է ամենօրյա պարբերականությամբ՝ վերջիններիս ստորագրությամբ (ՁևN 10):

31. Պրոբացիայի ծառայությունը կարող է ինքնուրույն կազմակերպել և վերահսկել հանրային աշխատանքների կատարումը՝ կազմակերպությունների հետ նախապես համաձայնեցնելով աշխատանքների կատարման վայրը:

32. Դատապարտյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառման կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նշանակվելու դեպքում նշված հանգամանքները ճշտելուց հետո ստորաբաժանման ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է հանրային աշխատանքների ձևով նշանակված պատժի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում մինչև համապատասխանաբար նշված խափանման միջոցի ժամկետը լրանալը կամ այն փոփոխելը կամ վերացնելը կամ նշանակված պատժի կրման ավարտը: Այդ դեպքում հանրային աշխատանքների կատարման կասեցումը 3 աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է:

33. Պրոբացիայի ծառայողն ամիսն առնվազն 1 անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ, այցելում է դատապարտյալի՝ հանրային աշխատանքների կատարման աշխատավայր՝ եզրափակիչ դատական ակտի պահանջների կատարման ընթացքը, աշխատանքի կատարման ժամանակացույցը վերահսկելու և տվյալ աշխատավայրի վարչակազմից պարզաբանումներ ստանալու նպատակով, որի արդյունքով կազմվում է արձանագրություն:

34. Սույն կանոնակարգի 41-րդ կետով նախատեսված դեպքում պրոբացիայի ծառայողը, հաշվի առնելով այցելության ընթացքում հնարավոր խախտումների վերաբերյալ հայտնաբերված տվյալները, կարող է պրոբացիայի շահառուից կամ աշխատավայրի վարչակազմից պահանջել վերադարձնել ժամանակացույցի՝ նրանց օրինակը: Այդ ժամանակահատվածում վարչակազմի կողմից 2 օրինակից կազմվում է արձանագրություն պրոբացիայի շահառուի աշխատանքի մասին, որոնցից մեկը տրվում է պրոբացիայի շահառուին: Պրոբացիայի շահառուի աշխատած ժամերը ներառվում են ժամանակացույցի մեջ: Արձանագրություն կազմելուց հետո պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին կամ աշխատավայրի վարչակազմին վերադարձնում է ժամանակացույցի՝ նրանց օրինակը:

35. Եթե պատժի ժամկետի ավարտից հետո պրոբացիայի շահառուն և աշխատավայրի վարչակազմը չեն ուղարկում ժամանակացույցի՝ նրանց օրինակները, ապա պրոբացիայի ծառայողն իրավունք ունի պահանջելու դրանք:

36. Պրոբացիայի շահառուի՝ պատժից ազատվելուց հետո Պրոբացիայի ծառայությունն աշխատավայրի վարչակազմին տեղեկացնում է հանրային աշխատանքների ավարտի մասին:

37. Պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքում սկզբնական պատիժը կատարող հիմնարկը պրոբացիայի շահառուից ստորագրություն վերցնելուց հետո ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում ստորաբաժանում է ուղարկում դատական ակտի պատճենը և 5 օրվա ընթացքում ստորաբաժանում ներկայանալու մասին պրոբացիայի շահառուի ծանուցված լինելը հավաստող փաստաթուղթը:

38. Հանրային աշխատանքների ձևով պատժի կատարումն ապահովելու նպատակով ստորաբաժանումը հանրային աշխատանքների կատարման վայրերը որոշելու նպատակով համագործակցում է պետական մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որոնց հետ կնքվում են համապատասխան պայմանագրեր (Ձև N 11):

39. Ստորաբաժանումը, ստանալով հանրային աշխատանքների կատարման առաջարկված վայրերի մասին համապատասխան տեղեկատվությունը, այն համադրում է իր որոշած վայրերի հետ և կազմում հանրային աշխատանքների կատարման վայրերի ընդհանուր ցանկ, որը կարող է պարբերաբար վերանայվել: Ընդհանուր ցանկում առնվազն պետք է ընդգրկված լինեն հանրային աշխատանքի անցնելու վայրերը (կազմակերպությունները և մարմինները):

40. Ցանկում ընդգրկված կազմակերպություններից և մարմիններից յուրաքանչյուրի հետ ստորաբաժանումը գրավոր համաձայնեցնում է հանրային աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական և քրեակատարողական օրենսգրքերի պահանջները: Ժամանակացույցի մեկական օրինակ կազմվում է տարածքային մարմնի, աշխատավայրի վարչակազմի և պրոբացիայի շահառուի համար:

41. Ստորաբաժանումը կազմակերպություններին և մարմիններին ծանուցում է հանրային աշխատանքների ոչ պատշաճ կատարման կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու դեպքերում այդ մասին Պրոբացիայի ծառայությանն անհապաղ տեղեկացնելու պարտականության մասին:

42. Հանրային աշխատանքների կատարման վայրը ստորաբաժանման կողմից որոշվելու դեպքում հաշվի են առնվում հանրային աշխատանքների կատարման վայրի և պրոբացիայի շահառուի հաշվառման վայրի (հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրի) միևնույն համայնքի կամ Երևան քաղաքում վարչական շրջանի շրջանակում տեղակայված լինելու հանգամանքը: Յուրաքանչյուր դեպքում հանրային աշխատանքների կատարման վայրը պետք է լինի պրոբացիայի շահառուի հաշվառման վայրից (հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրից) ոչ ավելի, քան 30 կմ հեռավորության վրա: Հանրային աշխատանքների կատարման վայրը ստորաբաժանման կողմից որոշվելու դեպքում հնարավորինս հաշվի է առնվում նաև պրոբացիայի շահառուի կարծիքը:

43. Պրոբացիայի շահառուին ստորաբաժանման կողմից կարող են առաջարկվել հետևյալ աշխատանքները՝

1) բանվորական աշխատանքներ (բակերի բարեկարգում, շենքերի տանիքների վերանորոգում, ցանկապատերի ներկում, շենքերի կամ շինությունների կոսմետիկ վերանորոգում).

2) ոռոգման աշխատանքներ.

3) կանաչապատման աշխատանքներ.

4) հողի մշակման աշխատանքներ.

5) ճանապարհային նշանները ներկելու, մոնտաժելու աշխատանքներ.

6) պատմամշակութային վայրերի կամ զբոսայգիների մաքրման և բարեկարգման աշխատանքներ.

44. Ստորաբաժանման կողմից պրոբացիայի շահառուին առաջարկվում է համապատասխան աշխատանք: Պրոբացիայի շահառուին համապատասխան աշխատանքներն առաջարկելիս ստորաբաժանման կողմից հնարավորինս հաշվի է առնվում պրոբացիայի շահառուի սեռը, տարիքը, ֆիզիկական տվյալները, կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

45. Հանրային աշխատանքների ժամանակը որոշվում է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված սահմանափակումները:

46. Հանրային աշխատանքների կատարումը կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով և «Պրոբացիայի մասին» օրենքով սահմանված կարգով:

6. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ

47. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման նկատմամբ կիրառվում են սույն

կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

48.Պրոբացիայի ծառայությունը եզրափակիչ դատական ակտը ստանալուց հետո դրա պատճենն անհապաղ ուղարկում է պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմ, իսկ եթե պրոբացիայի շահառուն զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ այդ իրավունքը տրամադրած մարմնին կամ կազմակերպությանը:

49. Եթե պրոբացիայի շահառուն զրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, ապա Պրոբացիայի ծառայության պետի կողմից լիազորված ստորաբաժանման ծառայողը անհապաղ՝ դատական ակտը ստանալու հաջորդ աշխատանքային օրը, համապատասխան նշում է կատարում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից վարվող տվյալների շտեմարանում, որտեղ պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան ամիսը 1 անգամ ստուգում է դատապարտյալի կողմից աշխատանքի կատարման կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ տվյալները, ինչի վերաբերյալ կազմում է արձանագրություն:

50. Դատապարտյալի կողմից զինվորական կամ այլընտրանքային ծառայության անցնելու դեպքում Պրոբացիայի ծառայությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում պրոբացիայի շահառուին հանում է հաշվառումից և զինվորական կոմիսարիատ կամ դատապարտյալի ծառայության վայր է ուղարկում անձնական գործը՝ ծառայության ընթացքում տվյալ պատժի կատարումը շարունակելու նպատակով:

51. Պատիժը ծառայության վայրում կատարելու անհնարինության դեպքում զինվորական կոմիսարիատն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է անձնական գործը՝ նշելով պատժի կատարման անհնարինության պատճառները: Անձնական գործը ստանալուց հետո ստորաբաժման ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է զինվորական ծառայության ժամկետով պատժի կատարումը կասեցնելու մասին որոշում:

52. Եթե կիրառվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժի կասեցում, ապա

զինվորական կամ այլընտրանքային ծառայության ավարտից հետո պատժի կատարման կասեցումը վերացվում է:

53. Եթե պրոբացիայի շահառուի նկատմամբ կիրառվում է ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց կամ նշանակվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, ապա ստորաբաժանման ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով նշանակված պատժի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում՝ մինչև համապատասխանաբար նշված խափանման միջոցի ժամկետը լրանալը կամ այն փոփոխելը կամ վերացնելը կամ նշանակված ազատազրկման ավարտը: Այդ դեպքում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման կասեցումը վերացվում է ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ, իսկ պատժի կատարումը շարունակվում է ընդհանուր կարգով:

54. Պրոբացիայի շահառուի կողմից նոր աշխատանքի անցնելու դեպքում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուից պահանջում է 5 աշխատանքային օրվա ընթացքում աշխատավայրից ներկայացնել զբաղեցրած նոր պաշտոնի վերաբերյալ տեղեկանք:

7. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՎՏԱՐԵԼՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

55. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

56. Պրոբացիայի ծառայողն օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու վերաբերյալ դատական ակտը ստանալուց հետո ազատությունից զրկելու հետ չկապված հիմնական պատժի դեպքում պատժի կատարման ժամկետն ավարտվելուց առնվազն հինգ օր առաջ, իսկ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դեպքում պատժի կատարման

ժամկետն ավարտվելուց առնվազն մեկ ամիս առաջ ծանուցում է ուղարկում միգրացիայի հարցերով պետական լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Պրոբացիայի ծառայությանը տեղեկացնելու վերաբերյալ:

57. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես լրացուցիչ պատիժ նշանակված լինելու դեպքում հիմնական պատիժ կատարող հիմնարկը հիմնական պատժի կրումից ազատվելիս դատապարտյալից ստորագրություն վերցնելուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում Պրոբացիայի ծառայություն է ուղարկում դատական ակտի պատճենը և հինգ օրվա ընթացքում Պրոբացիայի ծառայություն ներկայանալու մասին պրոբացիայի շահառուի ծանուցված լինելը հավաստող փաստաթուղթը:

58. Դատապարտյալի՝ ծանուցմամբ նշված օրը Պրոբացիայի ծառայություն չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ դատապարտյալին հայտնաբերելու նպատակով:

59. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս՝ դրա ժամկետի հաշվարկը սկսվում է հիմնական պատիժը կրելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու պահից:

60. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես լրացուցիչ պատիժ նշանակված լինելու դեպքում հիմնական պատիժ կատարող հիմնարկը պատժի կրման ժամկետն ավարտվելուց առնվազն 50 օր առաջ Պրոբացիայի ծառայությանը գրավոր ծանուցում է պատժի ժամկետի ավարտի օրվա վերաբերյալ:

61. Սույն կանոնակարգի 56-րդ կետով նշված հանգամանքների բացակայության դեպքում ստորաբաժանման ղեկավարն ազատությունից զրկելու հետ չկապված հիմնական պատժի կամ վերահսկողության դեպքում պատժի կատարման կամ վերահսկողության ժամկետն ավարտվելուց առնվազն 5 օր առաջ, իսկ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դեպքում պատժի

կատարման ժամկետն ավարտվելուց առնվազն 1 ամիս առաջ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի պատճենն ուղարկում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ անհրաժեշտ աջակցություն ստանալու նպատակով:

62. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և 3 աշխատանքային օրվա ընթացքում միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալին պատժից ազատելու վերաբերյալ:

63. Օտարերկրյա քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության տարածքից վտարումը կատարելուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությանը: Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով նախատեսված կարգով:

8. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ

64. Ազատության սահմանափակում պատժատեսակի կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները: Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի՝ ստորաբաժանում ներկայանալու դեպքում պրոբացիայի շահառուին վերցնում է հաշվառման, ստորագրությամբ նրան պարզաբանում է ազատության սահմանափակման պատժի կատարման կարգն ու պայմանները, նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը, լրացվում է հաշվառման քարտ, կազմվում է վերահսկողության պլան:

65. Այն դեպքում, երբ դատարանի կողմից սահմանվել է առանց պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության բնակության վայրը փոխելու արգելքը, ապա պրոբացիայի շահառուն բնակության վայրը փոխելու համար համաձայնություն ստանալու նպատակով 7 օր առաջ դիմում է Պրոբացիայի ծառայությանը՝ նշելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը: Պրոբացիայի ծառայողը դիմումը ստանալուց հետո ստուգում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերի առկայությունը, և 5 աշխատանքային օրվա ընացքում ստորաբաժանման ղեկավարը կայացնում է որոշում բնակության վայրը փոխելու համաձայնություն տալու կամ մերժելու մասին:

66. Պրոբացիայի շահառուի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառման կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նշանակվելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում ազատության սահմանափակման ձևով նշանակված պատժի կատարումը կասեցվում է ստորաբաժանման ղեկավարի կողմից մինչև համապատասխանաբար նշված խափանման միջոցի ժամկետը լրանալը կամ այն փոփոխելը կամ վերացնելը կամ նշանակված պատժի կրման ավարտը: Այդ դեպքում ազատության սահմանափակման կատարման կասեցումը վերացվում է ստորաբաժանման ղեկավարի կողմից, իսկ պատժի կատարումը շարունակվում է ընդհանուր կարգով:

67. Ազատության սահմանափակման կատարումն իրականացվում է էլեկ-տրոնային հսկողության միջոցների կիրառմամբ: Հսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

68.Պատիժը կրելուց հետո պրոբացիայի շահառուի վարքագծի նկատմամբ հսկողությունը դադարեցվում է, և նա հանվում է հաշվառումից:

69. Եթե Պրոբացիայի ծառայությունը դատարան է ներկայացրել միջնորդու-թյուն պրոբացիայի շահառուի նկատմամբ հետախուզում հայտարարելու կամ պատիժն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ, և մինչև ազատության սահմանափակման ժամկետի ավարտը դատարանը համապատասխան որոշում

չի կայացնում, ապա ազատության սահմանափակման ժամկետի ավարտից հետո պրոբացիայի շահառուի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվում է, սակայն նա չի հանվում հաշվառումից և անձնական գործը չի արխիվացվում:

70. Պատիժը կրելուց հետո ստորաբաժանման ղեկավարը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք՝ պատիժը կրած լինելու մասին, և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ անձնական գործն արխիվացվում է:

9. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

71. Իրավաբանական անձի նկատմամբ կիրառված քրեաիրավական ներգործության միջոցների կատարումն ապահովում է Պրոբացիայի ծառայության՝ իրավաբանական անձի կամ դրա մասնաճյուղի գտնվելու վայրի կամ դրանց գործունեության իրականացման վայրի համապատասխան ստորաբաժանումը կամ դատական ակտում նշված վայրի համապատասխան ստորաբաժանումը:

72. Քրեաիրավական ներգործության միջոցի նշանակման մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո Պրոբացիայի ծառայության ղեկավարն անհապաղ դատական ակտը, գործող գործավարության կարգի համաձայն, մակագրում է ստորաբաժանման ղեկավարին: Ստորաբաժանման ղեկավարը դատական ակտը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում այն մակագրում է պրոբացիայի ծառայողին:

73. Քրեաիրավական ներգործության միջոցի նշանակման մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում պարզում է իրավաբանական անձի կամ դրա մասնաճյուղի գործունեության իրականացման կամ գտնվելու վայրը, իրավաբանական անձին ծանուցում է օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով վերջինիս անունից հանդես եկող իրավասու անձի (այսուհետ՝ իրավասու անձ)՝ Պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, ինչպես նաև կազմում է անձնական գործ:

74. Քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետի ավարտից հետո ստորաբաժանումն իրավաբանական անձին տալիս է տեղեկանք ներգործության միջոցի ժամկետի ավարտի մասին, իսկ իրավաբանական անձի անձնական գործն արխիվացվում է:

75. Քրեաիրավական ներգործության միջոցների ավարտի մասին Պրոբացիայի ծառայությունը 3 օրվա ընթացքում տեղեկացնում է դատական ակտը կայացրած դատարանին:

10. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒԳԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

76. Իրավաբանական անձի նկատմամբ նշանակված տուգանքի կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 9-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

77. Պրոբացիայի ծառայողն իրավասու անձի՝ ստորաբաժանում ներկայանալուց հետո վերջինիս անհապաղ, ստորագրությամբ պարզաբանում է տուգանքի կատարման կարգն ու պայմանները, իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

78. Այն դեպքում, երբ դատարանն իրավաբանական անձին թույլատրել է տուգանքը մաս առ մաս վճարել, կամ տուգանքի վճարման համար սահմանվել է մինչև 3 տարի ժամկետ, կամ երկարաձգել է տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը 3 տարով, ապա կազմվում է նաև վերահսկողության պլան:

79. Այն դեպքում, երբ իրավաբանական անձը Պրոբացիայի ծառայության կողմից պատշաճ ծանուցվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տուգանքի վճարման անդորրագիրը չի ներկայացնում Պրոբացիայի ծառայություն կամ խախտում է տուգանքի վճարումը երկարաձգելու կամ տուգանքը մաս առ մաս վճարելու կարգն ու պայմանները, Պրոբացիայի ծառայությունն այդ մասին կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝

իրավաբանական անձի նկատմամբ նշանակված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու, իսկ դրա բացակայության դեպքում՝ տուգանքը գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցմամբ փոխարինելու վերաբերյալ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

11. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՏԵՍԱԿՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

80. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցման կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 9-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

81. Իրավաբանական անձը գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցման կիրառման մասին եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան գործունեության իրականացումն անհապաղ դադարեցնելու մասին գրավոր ծանուցում է Պրոբացիայի ծառայությանը՝ ներկայացնելով տվյալ գործունեության իրականացման անհապաղ դադարեցման փաստը հավաստող անհրաժեշտ ապացույցներ:

82. Իրավաբանական անձը, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով, հիմնադիր փաստաթղթերում իրականացված փոփոխությունների վերաբերյալ տվյալները և դրանք հիմնավորող փաստաթղթերը ոչ ուշ, քան փոփոխություններն օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Պրոբացիայի ծառայություն:

83. Եթե գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցման կիրառման արդյունքում իրավաբանական անձին արգելվել է այնպիսի գործունեություն իրականացնելը, որի համար տրվել է լիցենզիա կամ որը հաշվառվել է որպես ծանուցման ենթակա գործունեություն, ապա

Պրոբացիայի ծառայությունն այդ մասին հայտնում է լիցենզավորող մարմնին կամ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումն իրականացնող լիազոր մարմնին:

84. Պրոբացիայի ծառայողը, հաշվի առնելով դատարանի կողմից սահմանված գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցման տևողությունը, ամիսն առնվազն 1 անգամ այցելում է իրավաբանական անձի կամ դրա մասնաճյուղի գտնվելու կամ դրանց գործունեության իրականացման վայր, կամ իրեն հայտնի՝ իրավաբանական անձի կողմից մատուցվող ծառայությունների, աշխատանքների կատարման կամ այլ համանման վայր:

85. Իրավաբանական անձը, որպես պարտապան, իր մասնակցությամբ դեռևս չավարտված սնանկության վարույթի առկայության մասին պարտավոր է անհապաղ հայտնել Պրոբացիայի ծառայությանը:

86. Եթե առկա է իրավաբանական անձի՝ որպես պարտապանի մասնակցությամբ դեռևս չավարտված սնանկության վարույթ, Պրոբացիայի ծառայությունը համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան՝ քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը հետաձգելու կամ արդեն իսկ հետաձգված քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը վերացնելու համար:

87. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումից խուսափելու դեպքում Պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացնում դատարան այն հարկադիր լուծարմամբ փոխարինելու վերաբերյալ:

12. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՀԱՐԿԱԴԻՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

88. Իրավաբանական անձի նկատմամբ նշանակված հարկադիր լուծարման կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 9-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

89. Դատարանի եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պրոբացիայի ծառայողն այն անհապաղ ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին:

90. Իրավաբանական անձի հարկադիր լուծարման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ստեղծվում է լուծարման հանձնաժողով:

91. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:

92. Դատարանի եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից իրավաբանական անձի կամավոր լուծարումը կամ վերակազմակերպումն արգելվում է:

93. Իրավաբանական անձի կողմից այնպիսի գործարք կամ կապակցված մի քանի գործարքներ իրականացնելը (բացառությամբ այն գործարքների, որոնց կատարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն պարտադիր է), որը կարող է հանգեցնել տվյալ իրավաբանական անձի հաշվապահական հաշվետվություններում առկա տվյալների հիման վրա որոշված ակտիվների 25 տոկոսից ավելի չափով ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելուն կամ այդ չափով գույք օտարելուն, կարող է իրականացվել միայն Պրոբացիայի ծառայության թույլտվությամբ:

94. Սույն կանոնակարգի 93-րդ կետով նախատեսված թույլտվությունը տալիս է Պրոբացիայի ծառայության ղեկավարը:

95. Եթե իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչը ներկայացնում է իրավաբանական անձի՝ որպես պարտապանի մասնակցությամբ դեռևս չավարտված սնանկության վարույթի առկայությունը հավաստող փաստաթղթեր, ապա ստորաբաժանման ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում միջնորդություն է ներկայացնում դատարան՝ քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը

հետաձգելու վերաբերյալ, իսկ քրեաիրավական ներգործության միջոցի կատարումն արդեն իսկ երկարաձգված լինելու դեպքում՝ դրա կատարումը վերացնելու վերաբերյալ:

13. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

96. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքի կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 9-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

97. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքի կատարման մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ դատական ակտի պատճենն ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին՝ համապատասխան գործողություններ կատարելու նպատակով:

98. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմինը դատական ակտի պատճենը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեության արգելքի կատարման վերաբերյալ տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությանը:

99. Պրոբացիայի ծառայությունը լիցենզիաների էլեկտրոնային միասնական գրանցամատյանում ստուգում է տվյալ իրավաբանական անձի անվանումով գործունեության որոշակի տեսակի համար լիցենզիա ստանալու հանգամանքը:

100. Լիցենզիա ստացած լինելու վերաբերյալ տեղեկության առկայության դեպքում լիցենզավորող մարմնին հայտնում է իրավաբանական անձի նկատմամբ կիրառված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքի վերաբերյալ՝ իր իրավասության շրջանակում համապատասխան գործողություններ կատարելու նպատակով:

101. Պրոբացիայի ծառայությունը ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային միասնական գրանցամատյանում ստուգում է տվյալ իրավաբանական անձի անվանումով ծանուցման ենթակա գործունեության իրականացման համար հաշվառված լինելու հանգամանքը և

նման տեղեկության առկայության դեպքում լիազոր մարմնին հայտնում է իրավաբանական անձի նկատմամբ կիրառված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքի վերաբերյալ՝ իր իրավասության շրջանակում համապատասխան գործողություններ կատարելու նպատակով:

102. Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքի կատարման ապահովման ուղղությամբ ձեռնարկած գործողությունների և դրանց արդյունքների մասին բոլոր տվյալները ներառում է տվյալ իրավաբանական անձի անձնական գործում:

14. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՈՇԱԿԻ ՎԱՅՐԵՐ ԱՅՑԵԼԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

103. Որոշակի վայրեր այցելելու արգելքի կիրառումն ապահովում է Պրոբացիայի ծառայության՝ պրոբացիայի շահառուի հաշվառման, մշտական բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի կամ բնակության վայրին մոտ համապատասխան ստորաբաժանումը կամ մշտական բնակության վայր չունեցող, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձի դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի ստորաբաժանումը կամ Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացում և վերականգնողական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումը:

104. Որոշակի վայրեր այցելելու արգելքի մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո Պրոբացիայի ծառայության ղեկավարն անհապաղ դատական ակտը գործող գործավարության կարգի համաձայն մակագրում է ստորաբաժանման ղեկավարին:

105. Ստորաբաժանման ղեկավարը դատական ակտը ստանալուց հետո անհապաղ այն մակագրում է ստորաբաժանման պրոբացիայի ծառայողին:

106. Որոշակի վայրեր այցելելու արգելքի մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո, իսկ ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ զուգակցված նշանակված լինելու դեպքում, պատժի կատարումն ավարտվելուց կամ անձի՝ պատժից ազատվելուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում պարզում է

պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է Պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ և կազմում է անձնական գործ:

107. Պրոբացիայի ծառայություն ներկայանալու դեպքում անձը վերցվում է հաշվառման, նրա համար կազմվում է վերահսկողության պլան, և լրացվում է հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

108. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի՝ ստորաբաժանում ներկայանալուց հետո անհապաղ, ստորագրությամբ, պրոբացիայի շահառուին՝ վերջինիս համար հասկանալի լեզվով պարզաբանում է որոշակի վայրեր այցելելու արգելքի կիրառման կարգը և պայմանները, նրա իրավունքները և պարտակա-նությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը:

109. Ծանուցվելուց հետո Պրոբացիայի ծառայություն չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտա-վոր է այցելել պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որոնց մասին կազմում է արձանագրություն:

110. Պրոբացիայի շահառուին նրա բնակության կամ աշխատանքի վայրում չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին անհապաղ տեղե-կացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, որն իր իրավա-սության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու ուղղությամբ:

111. Եթե պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը 15 օրվա ընթացքում չի բացահայտվում, ապա Պրոբացիայի ծառայությունն այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պրոբացիայի շահառուի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ:

112. Որոշակի վայրեր այցելելու արգելքն իրականացվում է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ՝ սույն կանոնակարգի 18-րդ գլխով սահմանված կարգով:

113. Պրոբացիայի շահառուի կողմից՝ դատարանի սահմանած որոշակի վայրեր այցելելու արգելքը 2 և ավելի անգամ խախտելու պարագայում Պրոբացիայի ծառայությունն այդ մասին կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝ որոշակի վայրեր այցելելու արգելքը կարճաժամկետ ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ:

114. Որոշակի վայրեր այցելելու արգելքի ժամկետի ավարտից հետո պրոբացիայի շահառուի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվում է, ստորաբաժանման պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք որոշակի վայրեր այցելելու արգելքի ժամկետի ավարտի մասին, պրոբացիայի շահառուին հանում է հաշվառումից, իսկ անձնական գործն արխիվացվում է:

115. Վերահսկողության ավարտի մասին Պրոբացիայի ծառայությունը 3 օրվա ընթացքում տեղեկացնում է դատական ակտը կայացրած դատարանին:

15. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

116. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կատարման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 14-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

117. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո այդ մասին 3 օրվա ընթացքում հայտնում է դատական ակտը կայացրած դատարանին:

118. Եթե հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն կիրառելու ժամանակ անձը կալանավորվում է կամ դատապարտվում է կարճաժամկետ

ազատազրկման կամ ազատազրկման, ապա հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն ունեցող անձի անձնական գործը Պրոբացայի ծառայությունը փոխանցում է քրեակատարողական հիմնարկ՝ հոգեբանական օգնություն ստանալու պարտականության հետագա ընթացքը և դրա շարունակականությունն ապահովելու նպատակով:

119. Եթե անձն ազատվում է կալանքից կամ կարճաժամկետ ազատազրկումից կամ ազատազրկումից մինչև հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կիրառման ժամկետի ավարտը, ապա քրեակատարողական հիմնարկն անձնական գործն ուղարկում է Պրոբացիայի ծառայություն՝ հոգեբանական օգնություն ստանալու պարտականության հետագա ընթացքը և շարունակականությունն ապահովելու նպատակով:

120. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս պրոբացիայի ծառայողն իրավունք ունի պրոբացիայի շահառուին հրավիրելու ստորաբաժանում, ստանալու գրավոր կամ բանավոր պարզաբանումներ, հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցից պահանջելու տեղեկություններ պրոբացիայի շահառուի վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև իրականացնելու վերահսկողության պլանից բխող այլ գործողություններ:

121. Պրոբացիայի շահառուին հոգեբանական օգնություն ցույց են տալիս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցները՝ հիմնվելով աշխատանքի այնպիսի մեթոդների վրա, որոնք ապացուցահեն են, կլինիկապես փորձարկված, մասնագիտորեն ընդունելի և համապատասխանում են սահմանված մասնագիտական չափանիշներին:

122. Հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցին Պրոբացիայի ծառայությունը տրամադրում է հոգեբանական օգնություն ստանալու պարտականության մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը:

123. Հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցը պրոբացիայի շահառուին հոգեբանական օգնություն է տրամադրում՝ հաշվի առնելով

հոգեբանական օգնություն ստանալու պարտականության մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված ժամկետը:

124. Հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցը Պրոբացիայի ծառայության պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ պարբերաբար տեղեկություն է տրամադրում պրոբացիայի շահառուի հոգեբանական օգնություն ստանալու, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վարքագծի վերաբերյալ:

125. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն ունեցող պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի վատթարացման դեպքում Պրոբացիայի ծառայողն անհրաժեշտության դեպքում դիմում է հոգեբույժի՝ մասնագիտական կարծիք ստանալու նպատակով, ինպես նաև 2 օրվա ընթացքում պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի վատթարացման մասին կազմում է արձանագրություն և այն ներկայացնում համապատասխան դատարան, ինչպես նաև տեղեկացնում պրոբացիայի շահառուի բնակության վայրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությանը: Արձանագրությանը կցվում է պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի վատթարացումը փաստող՝ հոգեբանի կամ հոգեբույժի մասնագիտական կարծիքը:

126. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն ունեցող՝ պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի բարելավման դեպքում 2 օրվա ընթացքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և այն ներկայացնում համապատասխան դատարան, ինչպես նաև տեղեկացնում է պրոբացիայի շահառուի բնակության վայրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությանը: Արձանագրությանը կցվում է պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի բարելավումը փաստող՝ հոգեբանի կամ հոգեբույժի մասնագիտական կարծիքը:

127. Պրոբացիայի ծառայության ներկայացրած միջնորդության հիման վրա դատարանը կարող է կրճատել կամ երկարաձգել հոգեբանական օգնություն ստանալու պարտականության տևողությունը կամ դադարեցնել այն՝ հիմք ընդունելով հոգեբան-փորձագետի եզրակացությունը:

16. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ, ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

128. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կիրառվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները: Դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում և հրավիրում Պրոբացիայի ծառայություն՝ հստակ նշելով ներկայանալու օրը, ինչի վերաբերյալ կազմում է արձանագրություն: Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում, «Պրոբացիայի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, նրան պատշաճ կերպով ծանուցում է Պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ:

129. Եթե առկա են հավաստի տվյալներ, որ պրոբացիայի շահառուն ֆիզիկական անհնարինության կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկայանալ ստորաբաժանում, ապա պրոբացիայի ծառայողն անձամբ այցելում է պրոբացիայի շահառուին կամ ապահովում է նրա՝ ստորաբաժանում ներկայանալը:

130. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի՝ ստորաբաժանում ներկայանալուց հետո նրան վերցնում է հաշվառման, լրացնում հաշվառման քարտ, կատարում է ռիսկերի և կարիքների գնահատում, կազմում է վերահսկողության պլան, անհապաղ, ստորագրությամբ պարզաբանում է նրա իրավունքները և պարտականությունները, դրանք չկատարելու դեպքում՝ օրենքով սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև հաշվառման ներկայանալու օրվանից հետո վերահսկողությունն իրականացնող ստորաբաժանում ներկայանալու հաճախականության կամ նրա վրա դրված պարտականությունները չկատարելու յուրաքանչյուր փաստով վերահսկողությունն իրականացնող ստորաբաժանում ներկայանալու պար-

տականության մասին, ինչի մասին պրոբացիայի շահառուից վերցվում է ստորագրություն և լրացվում է պրոբացիայի շահառուի հաճախումների ժամանակացույցը (Ձև N 12):

131. Պրոբացիայի ծառայողի՝ պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո ստորաբաժանման ղեկավարը 3 օրվա ընթացքում տեղեկացնում է դատական ակտը կայացրած դատարանին՝ դատական ակտի կատարման մասին և տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

132. Դատական ակտն օրենքով սահմանված կարգով փոփոխվելու դեպքում պրոբացիայի շահառուի անձնական գործին, առկայության դեպքում, կցվում են սույն կանոնակարգի 12-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

133. Եթե պրոբացիայի շահառուն խուսափում է վերահսկողությունից «Պրոբացիայի մասին» օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան կազմված հաճախումների ժամանակացույցով սահմանված օրերին 2 և ավելի անգամ կամ սահմանված ժամանակահատվածում ոչ մի անգամ չի ներկայանում Պրոբացիայի ծառայություն, ապա պրոբացիայի ծառայողը 3 աշխատանքային օրվա ընթացքում պրոբացիայի շահառուին ծանուցագրով հրավիրում է Պրոբացիայի ծառայություն, պարզում է կատարված խախտման պատճառը՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով համապատասխան փաստաթղթեր: Պրոբացիայի շահառուին գրավոր նախազգուշացվում է պատիժը պայմանականորեն չկիրառելը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու հարցով դատարան դիմելու հնարավորության մասին (Ձև N 13), որի կապակցությամբ կազմվում է համապատասխան արձանագրություն: Արձանագրությունը ստորագրությամբ ծանոթացվում է պրոբացիայի շահառուին:

134. Եթե պրոբացիայի շահառուն փորձաշրջանի ընթացքում կրկին կատարում է սույն կանոնակարգի 133-րդ կետով նշված խախտումը, ապա համակողմանի գնահատման ենթարկելով խուսափելու պատճառները՝ ստորաբաժանման ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 1 տարի ժամկետով փորձաշրջանի ժամկետը երկարաձգելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու

կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը վերացնելու և նրան պատիժ կրելու ուղարկելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան: Միջնորդության մեջ նշվում են պրոբացիայի շահառուի կողմից համապատասխան խախտումը կատարելու մասին վկայող փաստեր, այդ թվում՝ նրան տրված գրավոր նախազգուշացման մասին: Միջնորդությանը կարող են կցվել նաև բնութագրեր պրոբացիայի շահառուի աշխատանքի կամ ուսման, ինչպես նաև բնակության վայրերից:

135. Փորձաշրջանի մեջ գտնվող պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության իրականացման ավարտից հետո վերահսկողություն իրականացնող ստորաբաժանման ծառայողը պրոբացիայի շահառուին տալիս է փորձաշրջանի ժամկետի ավարտի մասին տեղեկանք և դրա մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ օրենքով սահմանված դեպքերում՝ այլ իրավասու մարմինների:

136. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության ժամկետը հաշվարկվում է ազատազրկման ձևով պատժի կրումից ազատվելու օրվանից: Պատիժը պայմանականորեն չկիրառված, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության ժամկետը հաշվարկվում է պրոբացիայի ծառայությունում հաշվառման վերցնելու օրվանից:

17. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀՂԻ ԿԱՆԱՆՑ, ՄԻՆՉԵՎ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

137. Հղի կանանց կամ մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտը ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու մասին տեղեկացնում է նրա բնակության վայրի

խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ երեխայի դաստիարակության և խնամքի նկատմամբ վերահսկողության ապահովման նպատակով:

138. Դատական ակտը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատվում: Պրոբացիայի շահառուի չհայտնաբերման դեպքում, «Պրոբացիայի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, նրան պատշաճ կերպով ծանուցվում է ստորաբաժանում ներկայանալու վերաբերյալ, կազմվում է անձնական գործ, լրացվում է հաշվառման քարտ:

Եթե առկա են հավաստի տվյալներ, որ պրոբացիայի շահառուն ֆիզիկական անհնարինության կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկայանալ ստորաբաժնում, ապա պրոբացիայի ծառայողն անձամբ այցելում է պրոբացիայի շահառուին կամ ապահովում է նրա՝ ստորաբաժանում ներկայանալը:

139. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո 3 օրվա ընթացքում հաղորդում է ուղարկում Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային բաժին:

140. Օրենքով սահմանված կարգով դատական ակտը փոփոխվելու դեպքում պրոբացիայի շահառուի անձնական գործին, առկայության դեպքում, կցվում են սույն կանոնակարգի 12-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

141. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի՝ ստորաբաժանում ներկայանալուց հետո անհապաղ, ստորագրությամբ պարզաբանում է նրա իրավունքները և պարտականությունները, դրանք խախտելու համար սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև հաշվառման ներկայանալու օրվանից առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ստորաբաժանում ներկայանալու պարտականության մասին, կազմում է վերահսկողության պլան:

142. Եթե մինչև վեց տարեկան երեխա ունեցող պրոբացիայի շահառուն խուսափում է երեխայի դաստիարակությունից և խնամքից, ապա պրոբացիայի ծառայողը խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում պրոբացիայի շահառուին գրավոր նախազգուշացնում է պատժի կրման հետաձգումը վերացնելու հնարավորության մասին:

143. Պրոբացիայի շահառուն երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափող է համարվում, եթե պաշտոնապես չհրաժարվելով երեխայից՝ նա երեխային թողնում է ծննդատանը, կամ հանձնում է մանկատուն կամ այլ հաստատություն, կամ չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ ու խնամքով, կամ մեկ ամսից ավելի ժամկետով երեխային թողնում է մերձավոր ազգականների կամ այլ անձանց մոտ և անձամբ չի զբաղվում նրա դաստիարակությամբ, կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց և խնամքից խուսափելու մասին, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով հրաժարվում է երեխայի դաստիարակությունից և խնամքից:

144. Եթե նախազգուշացում հայտարարվելուց հետո պրոբացիայի շահառուն շարունակում է խուսափել երեխայի դաստիարակությունից և խնամքից, կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հրաժարվում է երեխայից, կամ ստորաբաժանման պահանջով երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառով չի ներկայանում ստորաբաժանում, ապա ստորաբաժանումն այդ մասին կազմում է արձանագրություն և պատժի կրման հետաձգումը վերացնելու և դատական ակտով կիրառված պատիժը կատարելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:

145. Միջնորդությանը կցվում են պատժի կրման հետաձգման մասին դատական ակտի պատճենը, երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափելը հիմնավորող փաստաթղթերը, աշխատանքի և բնակության վայրերից ստացված բնութագրերը՝ դրանց առկայության դեպքում, կամ դրանց պատճենները:

146. Միջնորդությունը դատարան է ներկայացվում ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ երեխայի խնամքից խուսափելու վերաբերյալ արձանագրությունը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

147. Երեխայի վեցամյակը լրանալու կամ նրա մահվան կամ պրոբացիայի շահառուին ծնողական իրավունքներից զրկելու կամ հղիության ընդհատման կամ երեխային խնամքի հաստատություն հանձնելու դեպքն ի հայտ գալու պահից 3 օրվա ընթացքում պրոբացիայի ծառայողը դրա մասին կազմում է արձանագրություն և պատժի չկրած մասը կրելու ուղարկելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:

148. Հղի կին կամ մինչև վեց տարեկան երեխա ունեցող կամ պատժի կրումն այլ հիմքով հետաձգված պրոբացիայի շահառուները հաշվառումից հանվում են պատժի կրման հետաձգման ժամկետի ավարտից հետո՝ ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ:

149. Հղի կին կամ մինչև վեց տարեկան երեխա ունեցող կամ պատժի կրումն այլ հիմքով հետաձգված պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության իրականացման ավարտից հետո ստորաբաժանման պրոբացիայի շահառուին տալիս է փորձաշրջանի ժամկետի ավարտի մասին տեղեկանք, և դրա մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնին կամ օրենքով սահմանված դեպքերում՝ այլ իրավասու մարմինների:

150. Անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառված լինելու դեպքում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողը պրոբացիայի անչափահաս շահառուին վերջինիս օրինական ներկայացուցչի հետ ծանուցագրով հրավիրում է ստորաբաժանում, պարզաբանում է նրա՝

1) տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով.

2) պատճառած վնասը հարթելու պարտականություն դնելը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետում.

3) ժամանցի ազատությունը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով.

4) ուսման անցնելը, ուսումը շարունակելը, 18-ից մինչև 21 տարեկանում հանցանք կատարած անձի՝ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի անցնելը.

5) հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը:

151. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի նշանակված միջոցից խուսափելու կամ դրա պայմանները խախտելու դեպքում պրոբացիայի ծառայողի միջնորդությամբ դատարանը կարող է վերացնել նշանակված միջոցը և անչափահասին կամ 21 տարին չլրացած անձին ենթարկել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ կետով նախատեսված անվտանգության միջոցի:

18. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

152. Էլեկտրոնային հսկողության կիրառման ժամանակ էլեկտրոնային հսկողությունն իրականացվում է գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող, ռադիոալիքային արբանյակային կամ այլ տեխնիկական սարքերի և էլեկտրոնային ծրագրերի կիրառմամբ:

153. Բնակության վայրը չլքելու հետ կապված խափանման միջոցների վերահսկման դեպքում օգտագործվում են հատուկ էլեկտրոնային միջոցներ՝ ռադիոալիքային սարքավորումներ՝ անձնական նույնականացման սարքը և ֆիքսված վերահսկման սարքակազմը, որոնք հնարավորություն են տալիս պարզել պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, տեղաշարժը, վարքագիծը և դատական ակտով սահմանված սահմանափակումների պահպանումը:

154. Էլեկտրոնային հսկողության կիրառման համար օգտագործվող անձնական նույնականացման սարքն ամրացվում է պրոբացիայի շահառուին: Ֆիքսված վերահսկման սարքակազմը տեղադրվում է պրոբացիայի շահառուի բնակության վայրում, իսկ շարժական էլեկտրոնային սարքը՝ GPS արբանյակային վերահսկողության սարքն ամրացվում է պրոբացիայի շահառուի ոտքին կամ ձեռքին:

155. Անվտանգության միջոցների կատարման հետ համակցված էլեկտրոնային հսկողություն կիրառելու մասին կամ պատժի կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող անձանց կամ այն անձանց նկատմամբ, որոնց պատժի կրումը հետաձգվել է, սահմանված վերահսկողության

իրականացման ընթացքում էլեկտրոնային հսկողություն կիրառելու մասին դատական ակտը ստանալու դեպքում կիրառվում են սույն կանոնակարգի 20-րդ գլխով նախատեսված դրույթներն այնքանով, որքանով դրանք (mutatis mutandis) կիրառելի են սույն կետում նշված դեպքերում էլեկտրոնային հսկողություն իրականացնելու նկատմամբ:

19. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

156. Տնային կալանք կիրառելու մասին դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում կապ է հաստատում տնային կալանքի ձևով խափանման միջոց նշանակված անձի (այսուհետ՝ պրոբացիայի շահառու) հետ ճշտում է տնային կալանք կրելու համար սահմանված վայրը և այցելում նշված վայր, որտեղ նույնականացնում է պրոբացիայի շահառուին և էլեկտրոնային հսկողության սարքավորումն ամրացնում է նրա ոտքին կամ ձեռքին, ֆիքսված վերահսկման սարքակազմը տեղադրում է բնակության վայրում, որը հնարավորություն է տալիս ստուգելու պրոբացիայի շահառուի՝ վերահսկվող տարածքի սահմաններում գտնվելը, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

157. Պրոբացիայի ծառայողը տնային կալանք կրելու վայրում պրոբացիայի շահառուին վերցնում է հաշվառման, կազմում է անձնական գործ, լրացնում է հաշվառման քարտ, պրոբացիայի շահառուին՝ վերջինիս համար հասկանալի լեզվով պարզաբանում է նրա իրավունքները և պարտականությունները, անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց ազդեցությունը, էլեկտրոնային հսկողության կարգը և այն խախտելու համար սահմանված պատասխանատվության մասին, ինչպես նաև բացատրում է էլեկտրոնային հսկողության կիրառման համար օգտագործվող սարքավորման օգտագործման կարգը և դրա վնասման հետևանքները, ինչի մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը հանձնում է պրոբացիայի շահառուին (Ձև N 14):

158. Պրոբացիայի ծառայողը դատական ակտի պատճենը և էլեկտրոնային սարքավորման անհատականացման տվյալներն անհապաղ փոխանցում է Պրոբացիայի ծառայության էլեկտրոնային վերահսկման ստորաբաժանմանը: Պրոբացիայի ծառայության էլեկտրոնային վերահսկման ստորաբաժանումը ստացված տվյալներն անհապաղ մուտքագրում է էլեկտրոնային համակարգ և սկսում հսկողությունը:

159. Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման ծառայողը դատական ակտի օրինակը ստանալուց հետո էլեկտրոնային ծրագրում մուտքագրում է դատական ակտի տվյալները, պրոբացիայի շահառուի անձնական գործի համարը, ստացման ամսաթիվը, պրոբացիայի շահառուի տվյալները, գործը վարող ստորաբաժանման և ծառայողի տվյալները, դատական ակտում նշված էլեկտրոնային հսկողության միջոց կիրառելու պայմանները, ժամկետը և հետագա հսկողության իրականացման համար անհրաժեշտ այլ տվյալներ:

160. Էլեկտրոնային հսկողության սկիզբը հաշվվում է էլեկտրոնային հսկողության սարքը պրոբացիայի շահառուի ոտքին կամ ձեռքին ամրացնելուց և նրա բնակության վայրում սարքակազմը տեղադրելուց, դրա մասին արձանագրություն կազմելուց հետո:

161. Վերահսկման սարքակազմի ազդանշաններին հետևում է Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման աշխատողը:

162. Էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառման պայմանների խախտման դեպքում պրոբացիայի ծառայողը միջոցներ է ձեռնարկում խախտող անձի կողմից սահմանափակումների կատարումն ապահովելու համար՝ կապ հաստատելով տվյալ անձի հետ, իսկ կապի հաստատման անհնարինության դեպքում տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և իր իրավասությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկում խախտումը ճշտելու և վերացնելու ուղղությամբ:

163. Եթե անձի կողմից խախտումը տեղի է ունեցել ոչ աշխատանքային օրերին կամ ժամին, ապա վերահսկող ծառայողն անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Հայաստանի Հանրապետության

ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկում խախտումը ճշտելու և վերացնելու ուղղությամբ, ինչի վերաբերյալ անհապաղ հայտնում է Պրոբացիայի ծառայությանը:

164. Պրոբացիայի համապատասխան ստորաբաժանման ծառայողը խախտումը գրանցելուց հետո կարող է այցելել պրոբացիայի շահառուի բնակության վայր, վերցնել բացատրություն, տեխնիկական թերությունների դեպքում վերացնել դրանք, իսկ էլեկտրոնային հսկողության սարքի վնասման կամ ոչնչացման դեպքում փոխարինել սարքավորումները, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

165. Վերահսկողության ընթացքում ոչ տեխնիկական բնույթի խախտումներ հայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին նախազգուշացնում է իրավական հետևանքների մասին՝ համաձայն Ձև N 15-ի և խախտման մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում տեղեկացնում է վարույթն իրականացնող մարմնին:

166. Եթե պրոբացիայի շահառուն թույլ է տալիս խափանման միջոցի կիրառման պայմանների խախտում կամ հրաժարվում է խափանման միջոցների կիրառման պահանջները կատարելուց, ապա պրոբացիայի ստորաբաժանման ծառայողը այդ մասին կազմում է արձանագրություն՝ համաձայն Ձև NN 18-ի և 19-ի և տեղեկացնում է վարույթն իրականացնող մարմնին:

167. Տնային կալանք խափանման միջոցի ժամկետի ավարտից 10 օր առաջ վարույթն իրականացնող մարմնին տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությունը ժամկետի ավարտի վերաբերյալ:

168. Եթե վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացնում դատարան խափանման միջոցը երկարաձգելու կամ փոխելու վերաբերյալ, ապա այդ մասին անհապաղ տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությանը, իսկ Պրոբացիայի ծառայությունը խափանման միջոցի ժամկետի ավարտից հետո դադարեցնում է էլեկտրոնային հսկողությունը:

169. Եթե Պրոբացիայի ծառայությունը ստանում է խափանման միջոցը երկարաձգելու վերաբերյալ դատական ակտ, ապա վերսկսում է էլեկտրոնային հսկողությունը:

170. Տնային կալանք խափանման միջոցը դատարանի կողմից այլ խափանման միջոցով փոխարինվելու դեպքում պրոբացիայի ծառայողն այցելում է անձի գտնվելու վայր, հանում նրան ամրացված և վերջինիս բնակության վայրում տեղադրված էլեկտրոնային հսկողության միջոցները (Ձև N 16), անձին հանում է հաշվառումից, ինչի վերաբերյալ տեղեկացնում է դատական ակտը կայացրած դատարանին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացնում է:

171. Դատական ակտով նախատեսված էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման ժամանակահատվածը լրանալուց հետո պրոբացիայի ծառայողն այցելում է անձի բնակության վայր, հանում նրան ամրացված և վերջինիս բնակության վայրում տեղադրված էլեկտրոնային հսկողության միջոցը, անձին հանում է հաշվառումից, էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին անձին տալիս տեղեկանք և դրա մասին հայտնում է դատական ակտը կայացրած դատարանին, վարույթն իրականացնող մարմնին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացնում է (Ձև N 17):

172. Տնային կալանք խափանման միջոցի կատարման կարգի խախտումն անհարգելի է համարվում, եթե անձը լքել է դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը, կամ դատարանի կողմից նշանակված սահմանափակում-ները, կամ դիտավորյալ վնասել կամ ոչնչացրել է էլեկտրոնային հսկողության սարքավորումը:

173. Էլեկտրոնային հսկողության սարքը դիտավորյալ վնասելու կամ ոչնչացնելու դեպքում պրոբացիայի շահառուն պարտավոր է փոխհատուցել պատճառած վնասը: Փոխհատուցումը վճարվում է այդ նպատակով Պրոբացիայի ծառայությանը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված հաշվեհամարին:

20. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

174. Վարչական հսկողություն խափանման միջոցը կիրառելու մասին դատական ակտը ստանալու օրը պրոբացիայի ծառայողն անհապաղ կապ է հաստատում այն անձի հետ, որի նկատմամբ նշանակվել է վարչական հսկողություն խափանման միջոց, հայտնում է 3 աշխատանքային օրվա ընթացքում Պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ:

175. Պրոբացիայի ծառայություն պրոբացիայի շահառուի ներկայանալու դեպքում նա վերցվում է հաշվառման, կազմվում է անձնական գործ, ստորագրությամբ նրան պարզաբանվում են նրա իրավունքները և պարտականությունները, էլեկտրոնային հսկողության կարգը, ծանուցվում են դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության մասին, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության կիրառման համար օգտագործվող սարքավորման օգտագործման կարգը և դրա վնասման հետևանքները, ինչի մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը տրվում է այդ անձին, կազմվում է վերահսկողության պլան, լրացվում է հաշվառման քարտ:

176. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառելուց հետո նրա ոտքին կամ ձեռքին ամրացնում է վարչական հսկողության էլեկտրոնային սարքավորումը, դատական ակտը և անձնական գործի տվյալներն անհապաղ փոխանցում է Պրոբացիայի ծառայության էլեկտրոնային վերահսկման ստորաբաժանմանը:

177. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում դատական ակտը կայացրած դատարանին և վարույթն իրականացնող մարմնին հայտնում է անձին հսկողության ընդունելու մասին:

178. Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման ծառայողը դատական ակտի օրինակը և անձնական գործի տվյալները ստանալուց հետո էլեկտրոնային ծրագրում մուտքագրում է դատական ակտի տվյալները, պրոբացիայի շահառուի անձնական գործի համարը, ստացման ամսաթիվը, պրոբացիայի շահառուի տվյալները, գործը վարող ստորաբաժանման և ծառայողի տվյալները, դատական ակտում նշված էլեկտրոնային հսկողության միջոց կիրառելու

պայմանները, ժամկետը և հետագա հսկողության իրականացման համար անհրաժեշտ այլ տվյալներ, ինչպես նաև դատարանի կողմից հստակ վայրեր, հասցեներ նշված լինելու դեպքում՝ էլեկտրոնային ծրագրի քարտեզում նշում այդ վայրերը:

179. Էլեկտրոնային հսկողության սկիզբը հաշվվում է էլեկտրոնային հսկողության սարքը պրոբացիայի շահառուի ոտքին կամ ձեռքին ամրացնելուց և դրա մասին արձանագրություն կազմելուց հետո:

180. Էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառման պայմանների խախտման դեպքում համապատասխան ստորաբաժանման պրոբացիայի ծառայողը միջոցներ է ձեռնարկում խախտող պրոբացիայի շահառուի կողմից սահմանափակումների կատարումն ապահովելու համար՝ կապ հաստատելով տվյալ անձի հետ, իսկ կապի հաստատման անհնարինության դեպքում տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և իր իրավասությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկում խախտումը ճշտելու և վերացնելու ուղղությամբ:

181. Եթե պրոբացիայի շահառուի կողմից խախտումը տեղի է ունեցել ոչ աշխատանքային օրերին կամ ժամին, ապա պրոբացիայի ծառայողն անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկում խախտումը ճշտելու և վերացնելու ուղղությամբ, ինչի վերաբերյալ անհապաղ հայտնում է Պրոբացիայի ծառայությանը:

182. Պրոբացիայի համապատասխան ստորաբաժանման ծառայողը խախտումը գրանցվելուց հետո կարող է պրոբացիայի շահառուին հրավիրել Պրոբացիայի ծառայություն, վերցնել բացատրություն, տեխնիկական թերությունների դեպքում վերացնել դրանք, իսկ էլեկտրոնային հսկողության սարքի վնասման կամ ոչնչացման դեպքում փոխարինել սարքավորումները, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

183. Վերահսկողության ընթացքում ոչ տեխնիկական բնույթի խախտումներ հայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողը խախտման մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում տեղեկացնում է վարույթն իրականացնող մարմնին:

184. Վարույթն իրականացնող մարմնի կողմից խախտումն անհարգելի համարվելու դեպքում վարույթ իրականացնող մարմինը դատարան է ներկայացնում միջնորդություն՝ խափանման միջոցը փոխելու վերաբերյալ:

185. Վարչական հսկողություն խափանման միջոցը դատարանի կողմից այլ խափանման միջոցով փոխարինվելու դեպքում պրոբացիայի ծառայողն անձին հրավիրում է Պրոբացիայի ծառայություն, իսկ անհնարինության դեպքում այցելում է անձի գտնվելու վայր, հանում նրան ամրացված էլեկտրոնային հսկողության միջոցները, անձին հանում է հաշվառումից, ինչի վերաբերյալ տեղեկացնում է դատական ակտը կայացրած դատարանին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացնում է:

186. Վարչական հսկողություն խափանման միջոցի կիրառման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում վարույթ իրականացնող մարմինը ժամկետի ավարտից 10 օր առաջ ժամկետի ավարտի վերաբերյալ տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությունը:

187. Եթե վարույթ իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացնում դատարան խափանման միջոցը երկարաձգելու կամ փոխելու վերաբերյալ, ապա այդ մասին անհապաղ տեղեկացնում է Պրոբացիայի ծառայությանը, իսկ Պրոբացիայի ծառայությունը խափանման միջոցի ժամկետի ավարտից հետո դադարեցնում է էլեկտրոնային հսկողությունը:

188. Եթե Պրոբացիայի ծառայությունը ստանում է խափանման միջոցը երկարաձգելու վերաբերյալ դատական ակտ, ապա վերսկսում է էլեկտրոնային հսկողությունը:

189. Դատական ակտով նախատեսված էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման ժամանակահատվածը լրանալուց հետո պրոբացիայի ծառայողը հրավիրում է անձին Պրոբացիայի ծառայություն, հանում նրան ամրացված էլեկտրոնային հսկողության միջոցը, հանում է հաշվառումից, էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին անձին տալիս տեղեկանք և դրա մասին հայտնում է դատական ակտը կայացրած

դատարանին, վարույթն իրականացնող մարմնին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացնում է:

190. Վարչական հսկողություն խափանման միջոցի կատարման կարգի խախտումն անհարգելի է համարվում, եթե անձը խախտել է դատարանի կողմից իր նկատմամբ սահմանված արգելքները կամ դիտավորյալ վնասել կամ ոչնչացրել է էլեկտրոնային հսկողության սարքավորումը:

191. Էլեկտրոնային հսկողության սարքը դիտավորյալ վնասելու կամ ոչնչացնելու դեպքում այն ենթակա է փոխհատուցման՝ պատճառած վնասի չափով: Փոխհատուցումը վճարվում է այդ նպատակով Պրոբացիայի ծառայությանը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված հաշվեհամարին:

21. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ (ԱԼԿՈՀՈԼԻ), ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ), ԽԻՍՏ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԿԱՄ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԻ ԴԵՊՔՈՒՄ

192. Պրոբացիայի շահառուի կողմից ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օգտագործման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում պրոբացիայի ծառայողն ընդունում է պատճառաբանված որոշում պրոբացիայի շահառուի օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելու մասին՝ դրա մասին անհապաղ հայտնելով պրոբացիայի շահառուին և համապատասխան բժշկական հաստատությանը:

193. Սույն կանոնակարգի 192-րդ կետում նշված որոշմամբ սահմանված ժամկետում պրոբացիայի շահառուի կողմից հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետազոտությունների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին:

22. ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

194. Վերասոցիալականացման միջոցառումների մշակման նպատակներն են՝

1) պրոբացիայի շահառուների կողմից նոր հանցագործությունների կանխումը.

2) պրոբացիայի շահառուների համար օգտակար հանրային կապեր և շփումներ ստեղծելը, պահպանելը և զարգացնելը.

3) պրոբացիայի շահառուների սոցիալական պաշտպանվածությանը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը նպաստելը.

4) պրոբացիայի շահառուների աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, ստեղծագործական գործունեության զարգացմանը նպաստելը.

5) պրոբացիայի շահառուներին հոգեբանական աջակցություն տրամադրելը.

6) պրոբացիայի շահառուների իրավահպատակ վարքագծի դրսևորմանը և իրավագիտակցության բարձրացմանը նպաստելը.

7) պրոբացիայի շահառուների վերասոցիալիզացիան և հասարակություն վերաինտեգրվելուն նպաստելը:

195. Վերասոցիալականացման միջոցառումները մշակվում և իրականացվում են օրինականության, մարդասիրության, պրոբացիայի շահառուի իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը հարգելու, մշակութային, կրթական, մասնագիտական վերապատրաստմանը և վերառրակավորմանը, սպորտային, առողջապահական, հոգեբանական, վարքաբանական և զբաղվածությանն ուղղված աշխատանքների անհատականացման, տարբերակման և շարունակականության սկզբունքների հիման վրա:

196. Վերասոցիալականացման միջոցառումները տարբերակվում են՝ ելնելով կատարած հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից և հաշվի առնելով պրոբացիայի շահառուի սեռը, տարիքը, սոցիալ-հոգեբանական վիճակը, վերաբերմունքն իր կողմից կատարված հանցագործությանը և այլ առանձնահատկություններ:

197. Պրոբացիայի անչափահաս շահառուների համար նախատեսված վերասոցիալականացման միջոցառումները մշակվում և իրականացվում են՝

հաշվի առնելով նրանց լավագույն շահը: Պրոբացիայի անչափահաս շահառուի լավագույն շահի ապահովումն ուղղված է նրա իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, պրոբացիայի անչափահաս շահառուի զարգացմանը՝ հաշվի առնելով պրոբացիայի անչափահաս շահառուի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի առկայությունը, պրոբացիայի անչափահաս շահառուի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ինչպես նաև պրոբացիայի անչափահաս շահառուի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը և դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում ու այլ կարիքներ և պահանջներ:

198. Վերասոցիալականացման միջոցառումները մշակելու և սույն կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված լիազորություններն իրագործելու համար Պրոբացիայի ծառայությունն անհրաժեշտության դեպքում համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, հասարակական և այլ կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ:

199. Վերասոցիալականացման միջոցառումները մշակելու համար օրենսդրությամբ սահմանված համագործակցող մարմինները, անձինք և կազմակերպությունները դիմում են պրոբացիայի ծառայություն՝ ներկայացնելով վերասոցիալականացման միջոցառումը, դրա ժամկետները, պրոբացիայի շահառուներին, նպատակները, իրականացման պայմաններն ու առանձնահատկությունները: Վերասոցիալականացման միջոցառումը քննարկվում է պրոբացիայի ծառայությունում, որի վերաբերյալ տրվում է դրական կամ բացասական եզրակացություն:

200. Վերասոցիալականացման միջոցառումների մշակման ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք, պրոբացիայի ծառայության հետ համագործակցող այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց իրավասության շրջանակներում ձեռնարկում են համապատասխան միջոցներ պրոբացիայի շահառուի վերասոցիալականացման միջոցառումների արդյունավետությունն ապահովելու համար:

201. Պրոբացիայի շահառուների համար նախատեսված վերասոցիալակա-նացման միջոցառումներն իրականացվում են անհատական ծրագրի միջոցով, որը բաղկացած է երկու փուլերից՝

1) վերասոցիալականացման միջոցառումների մշակման փուլ.

2) վերասոցիալականացման միջոցառումների իրականացման փուլ:

202. Վերասոցիալականացման միջոցառումների մշակման փուլը ներառում է պրոբացիայի շահառուի ռիսկերի և պահանջմունքների գնահատումը և դրա հիման վրա վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագրի կազմումը:

203. Վերասոցիալականացման միջոցառումներն իրականացնելու նպատակով Պրոբացիայի ծառայությունն անհրաժեշտության դեպքում համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, հասարակական և այլ կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ:

204. Պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհա-տական ծրագրում ընդգրկված վերասոցիալականացման միջոցառումներից յուրա-քանչյուրը կարող է իրականացվել առնվազն 3 ամիս ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

205. Պրոբացիայի շահառուի հետ իրականացված վերասոցիալականացման միջոցառումների պարբերական վերլուծության հիման վրա իրականացվում է կատարված աշխատանքների արդյունավետության գնահատում: Պրոբացիայի շահառուի ռիսկերի և պահանջմունքների պարբերական գնահատման հիման վրա պրոբացիայի ծառայողը կարող է փոխել պրոբացիայի շահառուի վերասոցիա-լականացմանն ուղղված անհատական ծրագիրը և դրանում ներառված միջո-ցառումները, ավելացնել կամ նվազեցնել վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումների ծավալն ու հաճախականությունը:

206. Ռիսկերի և պահանջմունքների գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր 2 ամիսը մեկ անգամ կամ պրոբացիայի շահառուի կյանքում դրական կամ բացասական փոփոխությունների դեպքում:

207. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի նկատմամբ իրականացվող վերասոցիալականացման միջոցառումների ընթացքն ամրագրում է պրոբացիայի շահառուի վերահսկողության պլանում:

208. Վերասոցիալականացման միջոցառումների իրականացման փուլը ներառում է՝

1) պրոբացիայի շահառուի հիմնական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն (հեռակա) կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներին աջակցումը.

2) պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովմանը և սոցիալական ապահովությանն ուղղված աշխատանքների կատարումը.

3) մասնագիտական վերապատրաստմանը և վերառրակավորման ապահովմանն ուղղված աշխատանքների կատարումը.

4) հոգեբանական ծրագրերում ընդգրկումը.

5) վերապատրաստումներին և հմտությունների զարգացմանն ուղղված այլ ծրագրերում ընդգրկումը.

6) մշակութային ծրագրերում ընդգրկումը.

7) կրոնական միջոցառումներում ընդգրկումը.

8) մարզական միջոցառումներում ընդգրկումը.

9) ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, թունամոլությունից կամ դեղամոլությունից պրոբացիայի շահառուին բուժելու ուղղությամբ հոգեբանական, վարքաբանական, սոցիալական և առողջապահական ծրագրերի իրականացումը՝ անհատական և խմբային տարբերակով:

209. Վերասոցիալականացման միջոցառումները մշակվում են պրոբացիայի ծառայության կողմից: Վերասոցիալականացման միջոցառումների մշակման գործընթացում կարող են ներգրավվել նաև մասնագիտացված կազմակերպություններ, մասնագետներ կամ փորձագետներ:

210. Վերասոցիալականացման միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են Պրոբացիայի ծառայության պաշտոնական ինտերնետային

կայքէջում, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցներով ներկայացվում են դրանց մշակման կամ իրականացման փուլում ներգրավված շահագրգիռ մարմին-ներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց:

23. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

211. Պրոբացիայի շահառուն հաշվառումից հանվում է հետևյալ հիմքերով՝

1) պատժի կրման ժամկետն ավարտվելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում՝ փորձաշրջանի ժամկետի ավարտի, իսկ տուգանքի դեպքում՝ գումարն ամբողջությամբ վճարելու.

2) հանրային աշխատանքների կրելուց չարամտորեն խուսափելու դեպքում՝ ազատազրկմամբ փոխարինելիս.

3) պատիժը պայմանականորեն չկիրառելը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի կրման հետաձգումը վերացնելիս և դատավճռով նշանակված պատիժը կատարելիս.

4) օրենքով նախատեսված հիմքերով պրոբացիայի շահառուի կողմից պատիժն ամբողջությամբ կրելուց հետո.

5) համաներման կամ ներման դեպքում.

6) բնակության վայրը փոխելու դեպքում ստորաբաժանման հաշվառումից հանելիս.

7) նոր հանցանք կատարելու հետևանքով դատավճիռների համակցությամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս.

8) մահվան դեպքում.

9) տնային կալանք կամ վարչական հսկողություն խափանման միջոցների ժամկետի ավարտի դեպքում.

10) անվտանգության միջոցների ժամկետի ավարտի կամ ամբողջությամբ կատարվելու դեպքում:

212. Սույն կանոնակարգի 211-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված դեպքում մինչև պատժի ժամկետը լրանալը ստորաբաժանման կողմից սպասարկվող

տարածքի հաշվառումից հանված անձանց վերաբերյալ հաղորդում է ուղարկվում նոր բնակության վայրի ստորաբաժանում: Պրոբացիայի շահառուի անձնական գործը, ինչպես նաև հաշվառման քարտն ուղարկվում են նրա նոր բնակության վայրի ստորաբաժանում: Պրոբացիայի շահառուի նոր բնակության վայրի ստորաբաժանման պրոբացիայի ծառայողն անձնական գործն ու հաշվառման քարտը ստանալու մասին 7 օրվա ընթացքում տեղեկացնում է փաստաթղթերն ուղարկող ստորաբաժանմանը և իրականացնում պրոբացիայի շահառուի հաշվառում:

213. Պրոբացիայի շահառուն հաշվառումից կարող է հանվել օրենքով նախատեսված այլ հիմքերով:

214. Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը, պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատական ակտով նշանակված պատիժը կատարելու, ինչպես նաև նոր հանցագործություն կատարելու համար դատապարտվելու դեպքում պրոբացիայի շահառուն հաշվառումից հանվում է դատական ակտը ստորաբաժանումում ստացվելու օրը:

215. Հաշվառումից հանված պրոբացիայի շահառուների թղթային անձնական գործերն արխիվ են հանձնվում այբբենական կարգով կազմված ցուցակով, իսկ էլեկտրոնային եղանակով կազմված գործերն արխիվացվում են էլեկտրոնային եղանակով:

Ձև N 1

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում եմ, որ _____ կողմից 20 թ. _____ ____-ի _____ ակտով Ձեր նկատմամբ նշանակված_____կապակցությամբ Դուք պարտավոր եք ծանուցումը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում ներկայանալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____ բաժին

(_____):

(հասցե)

Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում Դուք կարող եք ենթարկվել օրենքով նախատեսված պատասխանատվության:

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության

_____ **բաժնի պետ** /

/

_._._._

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

_____
(բաժնի անվանումը)

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾ № _____

_____
(Ազգանունը, անունը, հայրանունը)

Ծննդյան թիվը և վայրը_____
Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի _____ հոդվածով 20 թ._____-ին
_____––_____
(դատապարտվել է կամ նշանակվել է խափանման միջոց կամ անվտանգության միջոց, պայմանական վաղաժամկետ ազատվել է)

_____
(վարույթի տեսակն ու ժամկետը)

Հաշվառման վերցվել է ____ _____ 20 թ.
Հաշվառումից հանվել է ____ _____ 20 թ.

Հանձնված է արխիվ ____ _____ 20 թ.
Արխիվային թիվը՝ _____
Պահպանման ժամկետը՝ _____

ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

հ/հ	Բաժնի անվանումը	Նստավայրը	Գտնվելու ժամկետը		Անձնական գործի համարը
			ընդունվել է	տեղափոխվել է	

ՀՍԿՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստուգման օրը	Ստուգողի պաշտոնը, անունը, ազգանունը	Ստուգման արդյունքները (թերությունները և առաջարկությունները)	Ստուգողի ստորագրությունը

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Անձնական գործի առաջին մասում գրանցվում է առկա փաստաթղթերի ցանկը և ժամանակագրական հաջորդականությամբ կարվում են հետևյալ փաստաթղթերը՝ դատական ակտեր և ստորաբաժանման ղեկավարի կողմից կայացված որոշումներ:

ՑԱՆԿ
N _____ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՌԱՋԻՆ
ՄԱՍՈՒՄ ԵՂԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

h/h	Փաստաթղթերի անվանումը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և համարը	Թերթերի համարները	Ծանոթություն
1	2	3	4

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Անձնական գործի երկրորդ մասում գրանցվում է առկա փաստաթղթերի ցանկը և ժամանակագրական հաջորդականությամբ կարվում են հետևյալ փաստաթղթերը՝ իրավապահ մարմիններին ուղարկվող գրությունների պատճեններ, կողմնորոշիչ տեղեկանքներ պրոբացիայի շահառուի նկատմամբ հատուկ հսկողություն սահմանելու անհրաժեշտության դեպքում (թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու և այլն), խրախուսանքների և տույժերի մասին փաստաթղթեր, վերադաս մարմիններին ուղարկվող դիմումների կամ բողոքների ուղեկցող գրությունների պատճենները և ստացված պատասխանները, պրոբացիայի շահառուին բնութագրող, ինչպես նաև այլ փաստաթղթեր:

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻ N _____ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՈՒՄ ԵՂԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

հ/հ	**Փաստաթղթերի անվանումը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և համարը**	**Թերթերի համարները**	**Ծանոթագրություն**
1	**2**	**3**	**4**

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատիժը կրած լինելու մասին տեղեկանքը ստացա:

Ստացողի ստորագրությունը և ազգանունը_____

_____ _____20 թ.

Գործը բաղկացած է _____ թերթից:
Անձնական գործը կազմված է՝
ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____
բաժնի _____-ի կողմից:
(անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը)
_____ «_____ »_____20 թ.

Անձնական գործը վարեց՝

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____ բաժնի _____-ը:
(անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը)

_____ « »_____20 թ.

«Համաձայն եմ»
ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____ բաժնի պետ

_____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

«_____» _____ 20 թ.

Ձև N 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվառման վերցնելու և իրավունքներն ու պարտականությունները բացատրելու մասին

Ես՝ _____-ս
(պրոբացիայի շահառուի ԱԱՀ.)

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն ___ _____ 20 թ.

_____
(դատարանի անվանումը)

կողմից_____ի,
(նշել պատիժը կամ խափանման միջոցը կամ անվտանգության միջոցը կավ փորձաշրջանի տեսակը)

ստորագրությամբ հավաստում եմ այն մասին, որ ինձ բացատրվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվությունը՝ դրանք չկատարելու համար:

Տեղեկացվել եմ նաև պրոբացիայի ծառայողի յուրաքանչյուր կանչի դեպքում ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության տարածքային բաժին ներկայանալու պարտականության մասին:

(Սույն պարբերությունը լրացվում է փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված կամ խափանման միջոց կամ անվտանգության միջոց նշանակված պրոբացիայի շահառուների դեպքում):

____ _____ 20 թ. _____
(շահառուի ստորագրությունը)

Հաշվառման վերցրեց
ՀՀ արդարադատության նախարարության
պրոբացիայի ծառայության_____ բաժնի
(անվանումը)

_____

(պաշտոնը)

_____

_____ ___ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 4

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ

Ազգանունը _____Անձնական գործ

Անունը _____ N _____
Հայրանունը _____ Ծ/թ_____
Հասցեն և հեռախոսահամարը_____
Աշխատանքի վայրն ու պաշտոնը_____
Քաղաքացիությունը _____
«___» _____20 թ. _____
_____
(դատարանի անվանումը, հոդվածը, վարույթի տեսակը և չափը կամ ժամկետը)
_____
Լրացուցիչ պատժատեսակը_____
Հաշվառման վերցվել է՝ «_____» _____ 20 թ.
Հաշվառումից հանվել է՝ «_____»_____ 20 թ.
Պատժի/վերահսկողության ժամկետի սկիզբը «_____»
_____ 20 թ.
Պատժի/վերահսկողության ժամկետի ավարտը «_____»
_____ 20 թ.

Նախկին դատվածություններ_____
_____
_____
_____
Տեղեկություններ ընթացքի մասին_____
_____
_____
_____
_____
_____

Քարտը լրացրեց՝
ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության_____
_____
(անվանումը)
բաժնի _____
(պաշտոնը)
_____ _____ _____
(կոչումը) (ստորագրություն) (ազգանուն)

Ձև N 5

ՀՀ ոստիկանության

_____ պետ

(տարածքային ստորաբաժանման անվանումը)

_____

(կոչումը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության_____

(անվանումը)

բաժինը հայտնում է, որ _____

(պրոբացիայի շահառուի անունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի_____ հոդվածով (հոդվածներով) ____ _____ 20 թ._____ կողմից

(դատարանի անվանումը)

_____

(պատժի տեսակը և չափը, փորձաշրջանի կամ պատժի հետաձգման ժամկետը, խափանման կամ անվտանգության միջոցի տեսակը)

_____

պրոբացիայի շահառուի մասին լրացուցիչ տեղեկություններ)

_____

_____

Խնդրում եմ տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝

_____ -ի կողմից

(անունը, հայրանունը, ազգանունը,)

իրավախախտում կատարելու դեպքում:

ՀՀ արդարադատության նախարարության

պրոբացիայի ծառայության

_____ բաժնի

(անվանումը)

_____

(պաշտոնը)

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

«____» _____ 20 թ.

Ձև N 6

Անձնական գործ----------
Սերիա
ՏԵՂԵԿԱՆՔԻ ՊԱՏՃԵՆ N
Տրվում է ----------

/անուն, ազգանուն, հայրանուն/

-Ծննդյան թիվը----------
/օր, ամիս, տարի/
Ծնված ----------
/քաղաք, մարզ, գյուղ/
Ազգությամբ----------
Դատապարտված----------

Նախկին դատվածություններ --------

Այն մասին, որ պատիժ է կրել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ----------
---
----------**բաժնում «----»** --------
20 թ. մինչև «----» -------- **20 թ., որտեղից ազատվել է** ----------
---
Նկար **Բաժնի .....մասն.**
Տեղեկանքը ստացա

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Սերիա
ՏԵՂԵԿԱՆՔ N
Տրվում է ----------

/անուն, ազգանուն, հայրանուն/

Ծննդյան թիվը----------
/օր, ամիս, տարի/
Ծնված----------
/քաղաք, մարզ, գյուղ/
Ազգությամբ----------
Դատապարտված----------

Նախկին դատվածություններ----------

Այն մասին, որ պատիժ է կրել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ----------
---
----------**բաժնում «----»** -------- **20 թ. մինչև «----»** -------- **20 թ., որտեղից ազատվել է**----------
---
Ազատվողի ստորագրությունը----------
Նկար **Բաժնի պետ** ----------
--
Կնիք

Ձև N 7

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ
Անուն, ազգանուն, հայրանուն

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇԱՀԱՌՈՒԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՍՈՑԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱ-ԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ **(ամսաթիվ)**	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱ-ՀԱՏՎԱԾ	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՅՑ	ԾՐԱԳՐԻ /ՄԻՋՈ-ՑԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔ/ ԴԻՆԱ-ՄԻԿԱ	ԾՐԱԳՐԻ /ՄԻՋՈ-ՑԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ	ԱՅԼ ՏԵՂԵ-ԿԱՏՎՈՒ-ԹՅՈՒՆ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ - ----------

հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ տալիս եմ իմ համաձայնությունը մասնակցելու նախատեսվող վերասոցիալականացման ծրագրերին կամ միջոցառումներին:
Պրոբացիայի շահառուի մասնակցության անհամաձայնության դեպքում պարտադիր նշել վերջինիս դիրքորոշումը:
Լրացվում է միայն փորձաշրջանի դեպքում՝ հիմք ընդունելով ռիսկերի և կարիքների գնահատման արդյունքները

ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐ	ՍԿԻԶԲ ԵՎ ԱՎԱՐՏ (ամսաթիվ)	ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒ-ԹՅՈՒՆ	ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵԹԵ ԱՌԿԱ Է (ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՄՍԱԹԻՎԸ)	ԱՅԼ ՏԵՂԵ-ԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ- ----------
նշել այցելությունների քանակի հետ կապված հիմնավորումը

Պրոբացիայի շահառուի ստորագրություն——————

Պրոբացիայի ծառայողի ստորագրություն ——————

Ձև N 8

_____
(համապատասխան մարմնի (կազմակերպության) անվանումը)
_____
(ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը)
_____

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____ բաժինը հայտնում է, որ _____
(անվանումը)
_____ -ը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի_____ հոդվածով (հոդվածներով) ____ _____20 թ._____ կողմից
(դատարանի անվանումը)
_____
(նշել պատժատեսակը, պատժաչափը)
_____

Կից՝ դատավճռի, որոշման պատճենը՝ _____ թերթ:

Խնդրում եմ _____ ժամկետում կատարել հետևյալ գործողությունները՝_____
_____
_____
_____
_____
_____

ՀՀ արդարադատության նախարարության
պրոբացիայի ծառայության
_____ բաժնի պետ
_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ. Հեռախոսահամարը՝ _____

Ձև N 9

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____ բաժին

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց
(հանրային աշխատաժամերի)

Սույն ժամանակացույցը կազմված է ՀՀ քրեական օրենսգրքի _____ հոդվածով
_____ դատարանի
___ _____ 20 թ. դատավճռով (որոշմամբ) _____ ժամ հանրային աշխատանքների դատապարտված
_____
(շահառուի ազգանունը, անունը, հայրանունը)
_____ -ի կողմից պատիժը
_____
_____ -ում կրելու նպատակով:

ՀՀ արդարադատության նախարարության
պրոբացիայի ծառայության
_____

բաժնի պետ

_____
(ազգանունը, անունը, հայրանունը) _____
(ստորագրությունը)

_____
(կազմակերպության ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____ 20 թ.

Դատապարտյալի ստորագրությունը _____

Ձև N 10

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության
_____ բաժին

------ ---------- 20 թ.

Ամիսը, ամսաթիվը, տարեթիվը	Հանրային աշխա-տանքների սկիզբը	Հանրային աշխա-տանքների ավարտը	Նախա-տեսվող աշխատա-ժամերի քանակը	Փաստացի աշխատած ժամերի քանակը	Գործատու կազմա-կերպության անվանումը	Շահառուի ստորագրու-թյունը (ստորագրվում է վարչակազմի օրինակում)	Վարչակազմի ներկայացուցչի ստորագրու-թյունը (ստորագրվում է շահառուի օրինակում)

---------- բաժնի պետ ----------տնօրեն

Ձև N 11

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
Հանրային աշխատանքների ձևով պատիժ կրող անձին ժամանակացույցով սահմանված աշխատաժամերով ապահովելու մասին

քաղ. ---------- ----- ---------- 20 թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ---------- բաժինը (այսուհետև՝ բաժին) ի դեմս բաժնի պետ ---------- ---------- ---------- ի, որը գործում է ըստ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումների գործունեության կարգի՝ մի կողմից և ---------- ---------- (այսուհետ՝ հանրային աշխատանքի կրման վայր) ի դեմս ---------- մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի ---------- բաժինը պարտավորվում է հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինության կողմից ներկայացված հայտի հիման վրա դատական ակտով հանրային աշխատանքների ձևով պատիժ կրող անձին ուղեգրել հանրային աշխատանքների կատարման վայր, իսկ հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինությունը պարտավորվում է դատապարտյալին ապահովել բաժնի կողմից կազմված հանրային աշխատանքների կատարման ժամանակացույցով սահմանված աշխատաժամերով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Բաժինն իրավունք ունի՝

2.1.1. իրականացնել ընդհանուր վերահսկողություն հանրային աշխատանքների կատարման ամբողջ ընթացքի նկատմամբ, օրենքով սահմանված կարգով կամ հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինության կողմից ժամանակացույցում խախտում կատարելու հատկանիշների առկայության դեպքում դադարեցնել սույն պայմանագիրը և դատապարտյալին ուղեգրել հանրային աշխատանքների կատարման այլ վայր, այցելել հանրային աշխատանքների կատարման վայր դատապարտյալի կողմից պատժի կրման վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ ժամանակացույցի մեջ ներառված տեղեկատվությունը) կամ պարզաբանումներ ստանալու համար՝ առանց աշխատանքային գործունեությանը միջամտելու, պատժի ժամկետի ավարտից հետո կամ հաշվի առնելով բաժնի ծառայողի այցելության ընթացքում հայտնաբերված տվյալները, հանրային աշխատանքների կատարման վայրից հետ վերցնել ժամանակացույցի՝ իրենց տրված օրինակը.

2.1.2. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:
2.2. Բաժինը պարտավոր է՝
2.2.1. Հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինության հետ համաձայնեցնել հանրային աշխատանքների կատարման ժամանակացույցը, որում ներառված են դատապարտյալի աշխատաժամերը, դատապարտյալին պարտավորեցնել ժամանակացույցի իր օրինակը ստանալուց հետո ներկայանալ հանրային աշխատանքների կատարման վայր հանրային աշխատանքների ձևով պատիժը կրելու և 3 օրվա ընթացքում հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինությանը ծանուցում ուղարկել պատիժը կատարելու մասին՝ կցելով ժամանակացույցի՝ հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինության օրինակը, դատապարտյալի պատժից ազատվելու, պատժի կրումը հետաձգվելու կամ կասեցվելու, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կալանքով կամ ազատազրկմամբ փոխարինվելու դեպքում տեղեկացնել հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինությանը:
2.2.2. դատապարտյալի՝ պատժից ազատվելուց երկու շաբաթ առաջ, ինչպես նաև ազատվելուց անմիջապես հետո հանրային աշխատանքների աշխատավայրի վարչակազմին տեղեկացնել հանրային աշխատանքների համապատասխանաբար սպասվելիք կամ փաստացի ավարտի մասին:
2.3. Հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինությունն իրավունք ունի՝
2.3.1. հանրային աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պահանջելու դատապարտյալից պահպանել հանրային աշխատանքների կատարման վայրի ներքին աշխատանքային կանոնները, բարեխիղճ վերաբերմունք դրսևորելու աշխատանքի նկատմամբ, կատարելու իր համար նախատեսված աշխատանքները, ցանկացած ժամանակ դադարեցնելու սույն պայմանագիրը:
2.4. Հանրային աշխատանքների կատարման վայրի տնօրինությունը պարտավոր է՝
2.4.1. կազմակերպել և հսկել դատապարտյալի կողմից աշխատանքների կատարումը՝ այդ մասին համապատասխան գրառումներ կատարելով ժամանակացույցի իր օրինակում՝ ստորագրելով և կնքելով այն, հանրային աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու, աշխատանքային կանոնները խախտելու մասին անհապաղ տեղեկացնել բաժնին, պատժի ժամկետի ավարտից հետո բաժին ուղարկել ժամանակացույցի իր օրինակը:

3. Եզրափակիչ դրույթներ
3.1. Հանրային աշխատանքները կատարելիս ստացած վնասների դիմաց փոխհատուցումը կատարվում է ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և շարունակում է իր գործողությունը մինչև պայմանագրի գործողությունը դադարելը:
3.3. Սույն պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
3.4. Սույն պայմանագիրը կազմված է 2 բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, մեկական բնօրինակ յուրաքանչյուր կողմին:
3.5. Պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել միայն կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

3.6. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են լուծման համաձայն ՀՀ օրենսդրության:

4. Կողմերի հասցեները՝

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության բաժնի պետ	Տնօրեն
---	---
---	---
---	---

քաղ.----------

Հեռախոսահամարը

--- ---

Ձև N 12

ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Լուսանկար	Անուն, ազգանուն, հայրանուն			
	հոդվածը, փորձաշրջանի ժամկետը և պարտականությունները			
	ամսաթիվը և ստորագրությունը			
	20	20	20	20
I Հունվար				
II Փետրվար				
III Մարտ				

IV Ապրիլ				
V Մայիս				
VI Հունիս				
VII Հուլիս				
VIII Օգոստոս				
IX Սեպտեմբեր				
X Հոկտեմբեր				

XI Նոյեմբեր				
XII Դեկտեմբեր				

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի
ծառայության _____ բաժնի պետ,

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 13

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղ. _____ _____20 թ.

Ես՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության _____բաժնի
(անվանումը)

_____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ պրոբացիայի շահառու

_____
(անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը)

թույլ է տրվել_____
(նշել խախտման բնույթը)

_____
_____
_____
_____
_____
_____

_____ Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով ՀՀ

_____

_____պրոբացիայի շահառու_____ -ը նախազգուշացվում է, որ իր վրա դրված պարտականություններից հետագայում ևս խուսափելու կամ նոր իրավախախտում թույլ տալու դեպքում հնարավոր է դատարանի դատավճռով նրա նկատմամբ նշանակված պատիժն ի կատար ածվի (օրենսդրությամբ սահմանված կարգով վերացվի պատժի հետաձգումը կամ պատիժը պայմանականորեն չկիրառելը):

_____
(պրոբացիայի ծառայողի պաշտոնը և ստորագրությունը)

Ծանոթացա՝ _____
(պրոբացիայի շահառուի ստորագրությունը և ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 14

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Շահառու_____
_____
(անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

Հասցեն՝ _____
_____

Տեղադրված է էլեկտրոնային հսկողության մոդելը _____
(նշել մոդելը և հերթական համարը)

- Ժամկետը՝ ____ _____ 20 թ. - ____ _____ 20 թ.
- _____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
(լրացուցիչ նշումների տեղ)

Բացատրված են սարքի շահագործման կարգը, սարքի գործողության շառավիղը, մարտկոցի լիցքավորման պարբերականությունը:

Ես՝ պրոբացիայի շահառու _____-ս, տեղեկացված եմ
(անունը, հայրանունը, ազգանունը)
սարքի շահագործման կարգին (գործողության շառավիղը, մարտկոցի լիցքավորման պարբերականությունը և այլն), որ եթե կորցնեմ, ոչնչացնեմ կամ որևէ այլ կերպ վնասեմ ինձ տրված էլեկտրոնային հսկողության սարքը և ինքնակամ չհատուցեմ վնաս պատճառելու հետևանքով առաջացած ծախսերը, ապա հատուցումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

Տեղեկանքը կազմեցի _____ ____ _____ 20 թ.
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Տեղեկանքն ստացա _____ ____ _____ 20 թ.
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 15

Ն Ա Խ Ա Ջ Գ ՈՒ Շ Ա Ց ՈՒ Մ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Իմ կողմից՝ պրոբացիայի ծառայության _____
(ստորաբաժանման անվանումը)

_____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

____ _____ 20__ թ. հրավիրվել է (այցելել է բնակության վայր, աշխատանքի, ուսման վայր)
շահառու_____,
(անունը, հայրանունը, ազգանունը)
որը խախտել է _____
_____
_____
_____
_____:
(խախտման բնույթը, վայրը, ժամկետը)

Շահառու _____ նախազգուշացված է
(անունը, ազգանունը, անձնագրի տվյալները)
խախտումը կրկնվելու դեպքում իրավական հետևանքների մասին:

____ _____ 20___ թ. _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Սույն նախազգուշացումն ինձ հայտարարված է՝

____ _____ 20___ թ. _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 16

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ (ՓՈԽԱՐԻՆՄԱՆ) ՄԱՍԻՆ

Ես՝ պրոբացիայի ծառայության _____
(ստորաբաժանման անվանումը, պաշտոնը)

_____-ս, ծանոթանալով պրոբացիայի շահառու
(անունը, ազգանունը)

_____
(անունը, հայրանունը, ազգանունը)
_____ -ի
վերաբերյալ __ _____ 20__ թ. _____ -ի
(դատարանի անվանումը)
կողմից ստացված N _____ դատավճռին (որոշմանը),

_____
(նշվում են պատճառները, որոնցով հիմնավորվում է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման դադարեցման (փոխարինման) անհրաժեշտությունը)
_____
_____:

Ելնելով շարադրվածից և հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-44-րդ հոդվածները՝

Անհրաժեշտ է՝ դադարեցնել (փոխարինել) պրոբացիայի շահառուի _____
(անունը, ազգանունը, անձնագրային տվյալները)

նկատմամբ իրականացվող հսկողության՝ էլեկտրոնային անվտանգության միջոցների _____ կիրառումը:
(էլեկտրոնային հսկողության միջոցների անվանումը, հերթական համարը)
Պրոբացիայի ծառայության՝

_____ _____ _____
(ստորաբաժանման անվանումը, պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Կ.Տ.
Արձանագրության հետ ծանոթացա

_____ _____
(ստորագրությունը) (շահառուի անունը, ազգանունը)

___ _____ 20 թ.

Ձև N 17

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Պրոբացիայի շահառու

_____

(անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

Հասցեն՝_____

Էլեկտրոնային հսկողության սարքի կիրառումը դադարեցնել՝ դատավճռով սահմանված ժամկետների ավարտման կապակցությամբ՝

Ժամկետը՝ _____ _____ 20 թ. - _____ _____ 20 թ.

Տեղեկանքը կազմեց _____ ____ _____ 20 թ.

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

Տեղեկանքն ստացավ _____ ____ _____ 20 թ.

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 18

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Անձնական նույնականացման, ֆիքսված վերահսկման կամ շարժական՝ GPS արբանյակային վերահսկողության էլեկտրոնային հսկողության սարքը կիրառելուց հրաժարվելու մասին)

«_____» _____ 202 թ.

ք._____

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության_____

(տարածքային մարմնի անվանումը, պաշտոնը)

_____-ս, մասնակցությամբ_____-ի ներկայությամբ_____-ի կազմեցի սույն արձանագրությունն առ այն, որ_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Միաժամանակ _____-ին պարզաբանվեցին դատարանի որոշմամբ

(շահառուի անունը, հայրանունը, ազգանունը)

նշանակված այլընտրանքային խափանման միջոցը կիրառելուց հրաժարվելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքները:

Մասնակից(ներ)

_____

Շահառու_____

Արձանագրությունը կազմեց_____

Ձև N 19

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Պրոբացիայի շահառուի կողմից իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու մասին)

«_____» _____ 202 թ. ք._____

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության_____

(տարածքային մարմնի անվանումը, պաշտոնը)

_____-ս, մասնակցությամբ_____-ի ներկայությամբ_____-ի կազմեցի սույն արձանագրությունն առ այն, որ_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Միաժամանակ _____-ին պարզաբանվեցին դատարանի որոշմամբ

(շահառուի անունը, հայրանունը, ազգանունը)

նշանակված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքները:

Մասնակից(ներ)

_____

Շահառու_____

Արձանագրությունը կազմեց_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ